ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT
Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## ՄՈԴՈՒԼ 3.

### Համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունները

# ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երևան, 2024

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

**Վարժություն 2.** ***Ավագանու լիազորությունները հողային և քաղաքաշինական հարաբերությունների բնագավառներում***

*Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու լիազորությունները՝ ըստ բնագավառների.*

| N | Ավագանու լիազորությունները | Ավագանու լիազորություն-ները հողային հարաբերութ-յունների բնագա-վառում | Ավագանու լիազորություն-ները քաղա-քաշինական հարաբերութ-յունների բնագավառում |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին: | | |
| 2. | Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը: | | |
| 3. | Գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը մշակվում են համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով: | | |
| 4. | Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա: | | |
| 5. | Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը և դրանց առաջադրանքները մշակվում են օրենքի պահանջների ապահովմամբ և հաստատվում Հայաստանի Հանրապետության մարզպետի և միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների կողմից: | | |
| 6. | Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը: | | |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագիծը, իրավունք է ստանում՝ «Քաղաքաշինության մասին» օրենքով և ՀՀ կառավարության սահմանված կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով: | | |
| 8. | Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին և հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, տալիս է համաձայնություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի սեփականություն հանդիսացող հողերն օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ: | | |
| 9. | Համայնքի սեփականություն համարվող հողամասերն օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան: | | |
| 10. | Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը կատարում է համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: | | |

**Վարժություն 2**. ***ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ***

*Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու լիազորությունները՝ ըստ բնագավառների.*

| N | Ավագանու լիազորությունները | Ավագանու լիազորություն-ները հողային հարաբերութ-յունների բնագա-վառում | Ավագանու լիազորություն-ները քաղա-քաշինական հարաբերութ-յունների բնագավառում |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին: | | |
| 2. | Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը: | | |
| 3. | Գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը մշակվում են համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով: | | |
| 4. | Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա: | | |
| 5. | Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը և դրանց առաջադրանքները մշակվում են օրենքի պահանջների ապահովմամբ և հաստատվում Հայաստանի Հանրապետության մարզպետի և միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների կողմից: | | |
| 6. | Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը: | | |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագիծը, իրավունք է ստանում՝ «Քաղաքաշինության մասին» օրենքով և ՀՀ կառավարության սահմանված կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով: | | |
| 8. | Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին և հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, տալիս է համաձայնություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի սեփականություն հանդիսացող հողերը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ: | | |
| 9. | Համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան: | | |
| 10. | Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակությունը կատարում է համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: | | |